

**«ՈՒՂԵՑՈՅՑ» Բ, ԱՐԵՎՄՏԱՆԱՅ ԱՇԽԱՐՀԱՐԱՐԻ
ԵԶՐԱԲԱՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ՄԱՐՍԵԼ, 1995, 80 էջ**

Այս է տեսել Արևմտահայ աշխարհարարի եզրաքանական խորհրդի «Ուղեցույց» Բ հատորը Այն սկսվում է «Երկու խոսքով», որով հեղինակները տեղեկացնում են առաջին հատորի (1993 թ.) գրական արձագանքների, ընթերցողների մտահոգությունների և ցանկությունների մասին, ցանկություններ, որոնք քաջալերել են իրենց՝ ձեռնամուկ լինելու Բ հատորի կազմման աշխատանքներին:

«Ուղեցույց» այս հատորի հակիրճ առաջաբանում հեղինակները նշում են, որ իրենք այս անգամ ընտրել են գիտության կարևորագույն երկու ոլորտ, որոնց շուրջ ներկայումս կենտրոնացված են տնտեսական աշխարհի ամենաբազմադան հարաբերություններ, դրանք են՝ դրամատուն, սակարան և առևտուր: Վերջիններին ընտրությունը կամայական չէ. ինչպես արևմտահայերենում, այնպես էլ արևելահայերենում գիտության այդ ոլորտների տերմինաբանակարգերը մշակված չեն, բազմաթիվ հասկացություններ դեռևս չունեն իրենց կայուն համարձեցները, շատերը կարիք ունեն ճշգրտման և տարրերակման: Դրանց կարգավորումը հրամայական պահանջ է դարձել մանավանդ նորանկախ Հայաստանի համար, որը վերջին շրջանում ընդլայնել է իր տնտեսական կապերը և փոխադարձ շփումներն արտասահմանյան շատ պետությունների հետ: «Ինչ որ կենթադրե ստեղծումը՝ ազատ շուկայի համակարգին պահանջատեղեկացուցիչներուն. գրամատնային - առողջ դրություն, միջազգային սակարանի հետ աստիճանական ազուցում, սեփական առևտրական սենյակ, առևտրական կանոնադրություն, հարկային դրություն, ներածման և արտածման գործընթացներու կանոնավորում և այլն» (111):

Ինչպես առաջին հատորում, այստեղ ևս պահպանված է եռալեզու համակարգը. տրվում են այդ ոլորտների օտար եզրերը՝ իրենց հայերեն համարձեցներով՝ ֆրանսերեն-հայերեն, անգլերեն-հայերեն, գերմաներեն-հայերեն հաջորդականությամբ: Պետք է ասել, որ շատ օտար եզրեր, որոնք կիրառվում են սփյուռքի տարբեր հատվածներում, միշտ չէ, որ նույնական են: Այս հանգամանքը, անշուշտ, դժվարություն է ստեղծել հեղինակների համար, որոնք զգալի աշխատանք են կատարել տերմինացանկերը կազմելու, համարձեցները ստուգելու և ճշգրտելու ուղղությամբ:

Ֆրանսերեն-հայերեն Bangué, bourse դրամատուն, սակարան բաժնի ընդհանուր ցանկը կազմել է Լևոն Թորոսյանը (Վիննա, Ավստրիա), աշխատակցել են Նաև Արի Թոփուգխանյանը (Լիոն, Ֆրանսիա), Նուրհան Ուղունյանը, Գարրիել Բասմալյանը (Մոնթեալ, Կանադա) և Ռոբեր Տեր-Մերգերյանը (Մարսել, Ֆրանսիա): Ներկայացրել են շուրջ 350 եզր և անվանակարգային միավոր, իսկ commerce առևտուր բաժնի ընդհանուր ցանկը, որն ամենից ծավալուն է, կազմել են Ռոբեր Տեր-Մերգերյանը և Լևոն Թորոսյանը: Միաժամանակ աշխատել են Նաև Արի Թոփուգխանյանը, Նուրհան Ուղունյանը և Գարրիել Բասմալյանը: Այս ցանկն ընդգրկում է շուրջ 570 տերմին և անվանակարգային միավոր:

Անգլերեն-հայերեն դրամատուն, սակարան բաժինը կազմել է Լևոն Թորոսյանը՝ ներկայացնելով 293 տերմին և անվանակարգային միավոր: Միաժամանակ աշխատել են Արի Թոփուգխանյանը, Նուրհան Ուղունյանը, Գարրիել Բասմալյանը և Ռոբեր Տեր-Մերգերյանը, իսկ առևտուր բաժինը՝ վերջինս (374 տերմին և անվանակարգային միավոր): Աշխատակցել են Նաև մյուս հեղինակները:

Վերջին գլխի՝ գերմաներեն-հայերեն՝ դրամատուն, սակարան և առևտուր, եզրացանկը կազմել է Լևոն Թորոսյանը, աշխատակցել են Նաև մյուս հեղինակները: Առաջին բաժնում տրվում է 332, իսկ երկրորդում՝ շուրջ 370 եզր և անվանակարգային միավոր:

«Ուղեցույց» ունի նաև հավելված, որտեղ գետնի վրա են նախորդ համարում տեղ չգտած՝ կառագեղացության և տեղեկագիտության ոլորտներին վերաբերող մի շարք եզրեր:

Ի պատիվ հեղինակների, պետք է ասել, որ նրանք օգտակար աշխատանք են կատարել՝ ներկայացնելով նշված ոլորտներին վերաբերող շատ եզրերի հայերեն համարձեցներ, որոնք մասնագետները կարող են գործածել իրենց աշխատանքում: Այնտեղ կարելի է գտնել արևմտահայերենում կիրառվող, եզրի հիմնական պահանջները բավարարող (սեղմություն, բարե-

հնություն, սահմանելություն և այլն) շատ կաղմություններ, որոնք կարող են անցնել նաև արևելահայերենի դիտական ոճին՝ նպաստելով դրական երկու տարրերակների հզորամակարդերի մերձեցմանը, ինչպես մեծատիրություն, հեռուտագնորդ, ծանուցարշավ, հեռուտավաճառորդ, եվրոփոլսի, միջազգային փոխանցատու, վարկագիր, զանգեղի փոխգիր, զնարկու, հակառաջարկ, հանձնաժամակ, առևտրականացնել, զնակառ, հավելատուր, մրցագրություն, հայրապարհ, դրամահոս և այլն: Գովելի է նաև, որ հաճախ արևմտահայերենում կիրառվող կորի կողմին տրվում է նաև արևելահայերենում գործածվող տարրերակը՝ աստղանիշով: Կասկած չկա, որ այդ կողմի մասնագետներին՝ հետազոտում կարգավորելու գրական երկու տարրերակներում կիրառվող հոմանիշ ձևերը, վերացնելու ավելորդ զուգաձևությունները: Այդ կողմի նաև սփյուռքի մասնագետներին՝ ծանոթանալու արևելահայերենում կիրառվող ձևերին, իրենց գործնական աշխատանքում՝ հայրենակիցների հետ գործակցելու հաղթահարելու ղեկավարությունները: Այդ կարգի եղբորից են՝ սղույթուն-բանկություն, ապսպրսեմ-պատվեր, միջնորդ-լեմ-շաճալամիլ, իրավաշնորհում-արտոնագիր, տեսակով-բնամթերքով, սնտուկ-դրամարկ, պարտաքննում-ուժգնատում, վճար-մամկետ, վաճառանիշ-մակնիշ, տարեթոշակ-տարեվճար և այլն:

Գովելի է, որ «Ուղեցույցի» այս հատորը, ի տարրերություն առաջինի, զգալապես թոթափված է անհարկի զուգաձևություններից: Հեղինակներն աշխատել են հնարավորության սահմաններում հավատարմի մնալ տերմինի հիմնական պահանջներից մեկին՝ մեկ հասկացություն՝ մեկ անվանում:

Ցավոք, «Ուղեցույցի» զերծ չէ նաև թերություններից, որոնցից մի քանիսի մասին ուզում ենք նշել: 1) Կարծում ենք, որ Արևմտահայ աշխարհարարի հզորանական խորհուրդը չպետք է սահմանափակվի սուկ ցանկեր կազմելով, անհրաժեշտ է ընդլայնել գործունեության շրջանակները, քննել նաև լեզվի տարբեր մակարդակներին վերաբերող, ինչպես նաև խոսքի մշակույթին առնչվող բազմազան վիճաբարության հարցեր: 2) Հեղինակները չեն աշխատել հաղթահարել երբեք համանունության հետ առնչվող խոշորագույնները: Հայտնի է, որ եզրին ներկայացվող հիմնական պահանջներից մեկը միևնույն գիտության ոլորտին պատկանող համանուններից հրաժարվելն է: Եթե լեզվի ոլորտ ոճերում (գեղարվեստական, առօրյա-խոսակցական, հրապարակախոսական և այլն) համանունները խոշորագույն չեն ստեղծում գրողի և ընթերցողի, խոսողի և ունկնդրի միջև, ապա միևնույն գիտության ոլորտում դրանց գործառնությունը միանգամայն մերժելի է: Ցավոք, նման եղբորը եղակի չեն և հաճախակի են հանգիստում բերվող հզորացնակերում, ինչպես՝

compte a découvert — պարտական հաշիվ,

comte desapprovisonné — պարտական հաշիվ (էջ 4),

déflation — ապսղան, désinflation — ապսղան (էջ 15—16),

publicité — ծանուցում, reclame — ծանուցում (էջ 20—22),

renflouage — տնտեսական նեցուկ, renflonnement — տնտեսական նեցուկ (էջ 22),

Nachlaß — զեղչ, prelsnachlaß — զեղչ (էջ 62),

Zoldeklaration — մաքսային հայտարարություն (ն. տ.),

Zollerklärung — մաքսային հայտարարություն (էջ 65) և այլն:

3) Կարծում ենք, որ հարկ չկար ներկայացնել նաև ածականները (դրամատեային, պատ-րաստ, պահեստի, դրամական, հակասպանային և այլն), որոնք տերմիններ չեն, և այդպիսիք կարող են դառնալ միայն կապակցությունների կազմում՝ որպես բաղադրիչ միավորներ:

Վերջ նշված դիտողություններն ամենևին ստվեր չեն գցում «Ուղեցույցի» արժանիքներին: Դրանց մի մասը բխում է այն թերություններից, որոնք տեսնելու, հաջորդ համարը հնարավորին չափ կատարելով հրատարակելու բարի ցանկությունից: Մայր հայրենիքից հեռու, օտար ափերում գտնվող մեր ժողովրդի ներկայացուցիչների, անհատ մտավորականների՝ հայրենի մաքրությանը, նրա պահպանմանը և մշակմանն ուղղված յուրաքանչյուր ձեռնարկում արժանի է խրախուսանքի: Կասկած չունենք, որ «Ուղեցույցը» կնպաստի նաև սփյուռք-հայրենիք կապերի մերձեցմանը, դրանց առավել խորացմանը:

Ռ. Ն. ՇԱՆՈՒՆՑ

Րանասիրական գիտությունների դոկտոր